116. ԹԱԴԱՎԵՐԻ ԻՐԵՔ ՏՂԵՔԸ

Մի թադավոր իրեք տղա ա ունենում։

Օրերի մի օր դրա վենձ տղեն ասում ա.— Հայրի՛կ, ուզում եմ ամուսնանամ։

Հերը ասում ա.— Ա՛ բալա,, դե դնա աշխարը ման արի, վեր թադավորի աղջկանը կտեսնես կհավանես, կգաս կասես՝ գնանք բերենք։

Էս թադավորի վենձ տղեն գնում ա աշխարը ման գալի, մի ուրիշ թադավորի աղջկա հավանում ա, գալի ու մեկի էլ ա բան չի ասում։

Մեկ էլ միջնակ աղեն ա գնում ման գալու, սա էլ ա գալի էդ աղջկանը հավանում, ու իրեքն էլ էդ աղջկանը հավան են կեցել։

Մի օր էլ հերը ասում ա.— Գնանք ձեր կնանիքը բերենք։

Գալիս են ճամբի կեսը, ասում ա.— Գնանք առաջ ձեր վենձ ախպոր կնիկը բերենք, նոր ձերը։

Գալիս են ըտեղ, իրեքն էլ տեսնում են, որ էդ մի աղջկանն են հավանել։

Սհանք սկսում են իրար հետ վիճելը։

Նա ասում ա.— Իմն ա։

Նա էլ ասում ա.— Իմն ա։

Աղջիկը ասում ա.— Երբ էդպես ա, ով ինձ համար ամենալավ բանը կբերի, նրան էլ կառնեմ։

Սրանք ամեն մեկը մի կողմով գնում են։

Վենձ ախպերը մի լավ խալի ա տեսնում, ասըմ ա.— Լավ բան ա՛, առնեմ, տանեմ։

Մոտանում ա հարցնում ա, ասըմ ա.— Ի՞նչ արժի։

Ասըմ ա.— Հարուր հազար։

Ասըմ ա.— Շատ թանգ ա։

Ասըմ ա.— Բա գիտե՞ս՝ դա ինչ հունար ունի։

Ասըմ ա.— Ի՞նչ հունար ունի։

Ասըմ ա.— Քսան օրվա ճամբեն մի սհաթումը կհսցնի։

Սա էս խալին առնում ա ու ետ գալի։

Միջնակն էլ գնում ա ըլետ մի լավ հունարով գլխի չիքիլա ա առնում, ով գլխին քցում ա՝ դառնում ա աշխարհի հուրի-փարին։ Պուճուր ախպերն էլ մի հայլի ա առնում, ում վեր սիրտդ ուզի, եթե էդ հայլուն մտիկ անես, միչին կտեսնաս, թե դա էդ հադաղին ինչ ա անում։

Սրանք իրեքն էլ էդ բաները բերում են աղջկա մոտ։

Աղջիկը ասըմ ա.— Դե որ իրեքիդ բերածն էլ տհենց լավ թանկարժեք բաներ են, մընիդ խաթրն էլ ա կոտրիլ չեմ, ես կլեմ ձեր քիրը, դուք էլ իմ ախպերտինքը։